N 044-Ե

«12» մայիսի 2025 թ.

Վարդենիսի համայնքապետարան

Համայնքի ղեկավար՝ Ա.Խաչատրյանին

<<Կապավոր>> ՍՊԸ տնօրեն՝ Գ.Չլինգարյանից

Թեմա՝ Պայմանագիր N ՀՀԳՄ ՎՀ-ԲՄԱՇՁԲ-23/81- Վարդենիս քաղաքի Վիկտոր Համբարձումյան փողոցի ասֆալտապատում

Հարգելի պարոն՝ Խաչատրյան

Հայտնում ենք Ձեզ,որ Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի կողմից կատարվում է **Վարդենիս քաղաքի Վ.Համբարձումյան փողոցի** ջրագծերի կառուցման աշխատանքները : Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի ներկայացուցիչը հայտնեց, որ խողովակների և դիտահորների շին.մոնտաժային աշխատանքները ավարտված են և մոտակա մի քանի օրվա ընթացքում , փորձարկումներից հետո, մենք կարող ենք վերսկսել մեր պայմանագրով նախատեսված աշխատանքները:

Սակայն ճանապարհի ուսումնասիրության արդյունքում պարզ նկատվում է որ, 2022 թ.-ին նախագծով նախատեսված ծածկի կառուցման շերտերը (**առկա ծածկի ֆռեզավորում,փոսային նորոգում, հարթեցնող շերտ 50 տոկոս և 5 սմ մանրահատիկ ա/բ**) կիրառելի չէն ճանապարհի ներկա վիճակից ելնելով: Ջրագծերի կառուցման հատվածներում առկա ծածկը փափուկ գրունտից է , իսկ մնացած հատվածներում առկա ծածկի ֆռեզավորումից հետո նույնիսկ փոսային նորոգում հնարավոր չի լինի իրականացնել:

Որպեսզի նախատեսված գումարը ճիշտ օգտագործվի և արդյունքում ունենանք որակյալ ճանապարհ, անհրաժեշտ է վերանայել նածագիծը:

Խնդրում ենք Ձեզ վերոնշյալ հարցին տալ համապատասխան ընթացք:

ՏՆՕՐԵՆ՝ Գ.Չլինգարյան

«Կապավոր» ՍՊԸ
ՀՀ, Երևան, Ճիրակի 47/12
Հեռ.՝ +374 11 58 18 18 / 11 38 18 18
Էլ.փոստ՝ info@kapavor.am

"Kapavor" LTD
RA, Yerevan, 47/12 Shirak str.,
tel.: +374 11 58 18 18 / 11 38 18 18
e-mail: info@kapavor.am